ու հայերի կողոպուտի ու սպանութիւնների եւ 1960-ականներին միայն թրքերէն – ո՛չ այլ լեզու խօսելու պարտադրանքը: Հալածանքը շարունակուեց, բայց Մեծ Եղեռնին գործուած ոճրի յիշատակը նոյնիսկ թուրքի ուղեղում ջնջելու համար շրջուած պատմութեան նպատակադրուած քարոզչութիւն էր պէտք: Օրհան Փամուքի *Snow* վէպի հերոսներից մէկը նկարագրում է թանգարանի վերածուած ուղղափառ մի եկեղեցի Կարսում, որի մի մասը հայկական ջարդերին է նուիրուած: «բնականաբար, արտասահմանից զբօսաշրջիկներ գալիս են եւ ակնկալում են տեսնել թուրքերի ջարդը հայերին. եւ միշտ էլ ցնցւում են տեսնելով որ այս թանգարանում պատմութիւնը հակառակն է»: Զարմանալի չէ: Միթէ մինչեւ վերջերս, եւ հիմա վերանորոգման պատրուակով ժամանակաւորապէս փակուած Վան քաղաքի թանգարանի մի մասը չէ՞ր յատկացուած ներկայացնելու «Մահմեդականների ցեղասպանութիւնը հայերի կողմից 1915-ին», եւ դա միակ բաժինն էր ուր յիշատակւում էր հայի ներկայութիւնը Վանում:

Պատմական յիշողութիւնը Թուրքիայում, այնպէս որ իշխանութիւնները կը ցանկանային չի ջնջուել ու փոխանցւում է սերնդից սերունդ: Եթէ այդպէս չլինէր, ինչո՞ւ պիտի *Snow*-ի մէջ անգամներ ու անգամներ յիշուէր Կարսում կամ ընդհանրապէս Անատոլիայում ապրած հայերի գերակշռող ներկայութեան մասին, ներկայութիւն՝ որի յիշատակները հարիւր տարեկան են ու չեն մեռնում: Ու յանկարծ, անսպասելի վայրում մէկը հարցադրում է կատարում այդ մասին: Կարսի կեղեքուած ժողովուրդը հաւաքուել է իր իշխանութեան դէմ գերմանական մի թերթի մէջ բողոքի նամակ հրատարակելու նպատակով, երբ՝. «մէկը կերկե-